

## Բանկի բաներ՝

նիսկերի կառավարման համակարգ, գործառույթ, նիսկերի գնահատում, գործընթաց, ներքին նորմատիվային փաստաթղթեր:

**Բ**անկային գործունեությունում իր կարելու տեղն ու նշանակությունն ունի բանկային խմբի ֆինանսական կազմակերպությունների (այսուհետեւ՝ ԽՖԿ) նիսկերի կառավարման համակարգի ձևավորումը: Այն պետք է իրականացվի հաշվի առնելով դրանց սերտ ինտեգրման հնարավորությունը՝ հիմնված նիսկերի կառավարման միատեսակ մեթոդակարգերի օգտագործման եւ բանկային խմբի (ԲԽ) ու դրանց առանձին ֆինանսական կազմակերպությունների մակարդակով փոխգործակցությամբ պայմանավորված գործընթացների ներդրման վրա:

ԽՖԿ-ների նիսկերի կառավարման համակարգի հիմքում ընկած են կազմակերպական կառուցվածքի հետեւյալ հիմնական տարրերը<sup>[1,2]</sup>, որոնք հիմնված են բանկային խմբի եւ առանձին ԽՖԿ-ների մակարդակով նիսկերի կառավարման համակարգը պահպանող գործառույթների միասնության վրա: Վերոնշյալ հիմնական տարրերն են.

- Խմբի եւ առանձին ԽՖԿ-ների մակարդակով նիսկերի կառավարման գործընթացները,
- ԽՖԿ-ների նիսկի մակարդակի մոնիթորինգ,
- ԽՖԿ-ների նիսկերի կառավարման համակարգի վերահսկումն ու աջակցումը գործառույթային համակարգման միջոցով:

Բանկային խմբի շրջանակներում նիսկերի ինտեգրացված կառավարումը իրականացվում է կառավարման մարմինների եւ ստորաբաժանումների համապատասխան գործառույթների կատարման միջոցով՝ ինչպես ամբողջ խմբի, այնպես էլ խմբի առանձին կազմակերպությունների մակարդակով:

Սույն մեթոդաբանությունը կարգորոշում է ԽՖԿ-ների տնօրենների խորհուրդների, կոլեգիալ գործադիր մարմինների, ինչպես նաեւ բանկային խմբի կազմակերպություններում գործող պրոֆիլային կոմիտեների դերը, լիազորություններն ու պատասխանատվության ոլորտները տվյալ խմբի նիսկերի կառավարման համակարգի շրջանակներում:

Բանկային խմբի նիսկերի ինտեգրացված համակարգի կառավարումը կազմակերպորեն պետք է ներկայացված լինի չորս մակարդակով<sup>[3,4]</sup>.

Առաջին մակարդակը ներկայացնում են ինչպես բանկի տնօրենների խորհուրդը եւ վարչությունը, որոնք լիազորվում են ընդունվող կառավարչական որոշումները բանկային խմբի բոլոր

կազմակերպություններին ուղարկել կորպորատիվ կառավարման ընթացակարգերի միջոցով, ինչպես նաեւ բանկում գործող պրոֆիլային կոմիտեները:

● Երկրորդ մակարդակը ներկայացնում են բանկային խմբի նիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը, մեթոդաբանական աջակցության ստորաբաժանումները (իրենց իրավասությամբ վերապահված մեթոդաբանական աջակցության գործառույթների մասով), խմբի ներքին վերահսկողության/աուդիտի գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները, ինչպես նաեւ ԽՖԿ-ների գործունեության ընդհանուր համակարգումն իրականացնող ստորաբաժանումը:

● Երրորդ մակարդակը ներկայացնում են բանկային խմբի կազմակերպությունների կառավարման մարմինները՝ ԽՖԿ-ների տնօրենների խորհուրդները, միանձնյա եւ կոլեգիալ գործադիր մարմինները, ինչպես նաեւ խմբի կազմակերպություններում գործող պրոֆիլային կոմիտեները:

● Չորրորդ մակարդակը ներկայացնում են ԽՖԿ-ների նիսկերի կառավարման ստորաբաժանումները (այդ թվում՝ մեթոդաբանական աջակցության ստորաբաժանումները իրենց կողմից բանկի նիսկերի կառավարման գործառույթներ կատարելու մասով) եւ ԽՖԿ-ի մյուս ստորաբաժանումները, որոնք իրականացնում են նիսկերի կառավարումը՝ իրենց իրավասության շրջանակներում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ բանկային խմբի մակարդակով նիսկերի կառավարման գործընթացները պետք է ինտեգրվեն ԽՖԿ-ների մակարդակով նիսկերի կառավարման գործընթացներին: Խմբի ներքին նորմատիվային փաստաթղթերում պետք է նկարագրվեն ԽՖԿ-ների նիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ստորաբաժանումների փոխգործակցության կանոնակարգերը: Բանկային խմբի մակարդակով իրականացվում են նաեւ նիսկերի կառավարման գործընթացներ, որոնք նպատակամղված են տվյալ խմբի նիսկերի կառավարման նկատմամբ միասնական չափորոշիչների եւ մոտեցումների մշակմանն ու ներդրմանը, ինչպես նաեւ խմբի նիսկերի մակարդակի մոնիթորինգի գծով միջոցառումներ ձեռնարկելու գործընթացները:

Բանկային խմբի նիսկերի կառավարման նկատմամբ միասնական չափորոշիչների եւ մոտեցումների մշակմանն ու ներդրմանն նպատակով իրականացվող հիմնական գործընթացների թվին են դասվում՝

- Խմբի կոնսոլիդացված (համախմբված) նիսկերի ընթացիկ կառավարումը, որը ներառում է դրանց գնահատումն ու մոնիթորինգը,
- Խմբի նիսկերի մակարդակի կառավարման գործողությունների իրականացումը. նիսկերի կառավարման համա-

ՀՏԴ 336.71

# ԲԱՆԿԱՅԻՆ ԽՄԲԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՃՈՒՄՆԵՐ

**Հարություն  
ՉԱԵՐՅԱՆ**  
Տեխնիկական  
գիտությունների  
թեկնածու,  
ԵՊՀ կառավարման եւ  
գործարարության  
ամբիոնի  
դոցենտ

harutyunzakoyan@ysu.am

կարգի ներքին կառավարչական գործընթացները, որոնք ներառում են ներքին տրամադրված փաստաթղթերի մշակումն ու ռիսկի մակարդակի գնահատման մեթոդակարգերի հարմարեցումը՝ հաշվի առնելով ԽՖԿ-ների անհատական առանձնահատկությունները:

Բանկային խմբի եւ ԽՖԿ-ների մակարդակներով ռիսկերի կառավարման գործընթացների համաձայնեցվածությունն ապահովելու նպատակով պետք է սահմանվեն ռիսկերի կառավարման միատեսակ գործընթացների միասնական ցանկ, որոնք պետք է ներդրվեն բոլոր ԽՖԿ-ներում, ինչպես նաեւ տեղեկատվության մուտքից եւ ելքից ստանդարտ հոսքեր այդ գործընթացների համար: ԽՖԿ-ներից յուրաքանչյուրի մակարդակով իրականացվում է դրանց ռիսկերի ընթացիկ կառավարումը, որը ներառում է ռիսկերի նույնականացումը, դրանց գնահատումն ու մակարդակի մոնիթորինգը, ինչպես նաեւ ռիսկի մակարդակի կառավարման գործողությունների կատարումը:

ԽՖԿ-ների ռիսկի մակարդակի մոնիթորինգն իրականացվում է ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվության հիման վրա, որը պարունակում է միատեսակ մեթոդակարգերով պայմանավորված եւ հաշվարկված ռիսկի հիմնական ցուցանիշները: Մոնիթորինգն իրականացվում է ԽՖԿ-ներից յուրաքանչյուրի մակարդակով եւ ԽՖԿ-ների մակարդակով, ընդ որում՝ վերջինիս գծով վերահսկվում են ինչպես ԽՖԿ-ների համախառն ռիսկի ցուցանիշների մեծությունները, այնպես էլ ԽՖԿ-ների ռիսկի ցուցանիշների մեծությունները:

Ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվության համակարգը ներառում է հաշվետվության հետեւյալ տեսակները.

✓ կանոնավոր հաշվետվություն, որը կազմվում է հաստատված ժամանակացույցին համապատասխան եւ որի հիմնական նպատակն է ռիսկերի մակարդակի մասին տեղեկատվության հաղորդումը կառավարչական որոշումներին աջակցելու համար,

✓ ոչ կանոնավոր հաշվետվություն, որը կազմվում է ռիսկի մակարդակի սահմանված սահմանափակումների խախտման հայտնաբերման դեպքում եւ որի հիմնական նպատակն է իրականացնել բացահայտված խախտումների էսկալացիան ԽՖԿ-ների ստորաբաժանումների եւ գործադիր մարմինների մակարդակով, որոնք լիազորված են որոշումներ ընդունել ռիսկի մակարդակի վրա ազդելու կամ սահմանված սահմանափակումները փոփոխելու հետագա միջոցառումների վերաբերյալ:

Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը՝ որպես ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների համակարգող իրականացնում է հետեւյալ հիմնական գործառնությունները<sup>15,16</sup>.

● ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման նկատմամբ միասնական մեթոդաբանական եւ գործառնության մոտեցում է սահմանում, որը պարտադիր է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների կողմից կիրառման համար,

● վերահսկում է ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման վերաբերյալ ներքին տրամադրված փաստաթղթերի սահմանված պահանջների կատարումը ռիսկերի կառավարման ստորաբաժանումների կողմից,

● օպերատիվորեն համակարգում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների գործունեությունը,

● մշակում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցների որակավորման ստուգման եւ մասնագիտական գիտակության մակարդակի գնահատման ծրագրեր, ինչպես նաեւ մասնակցում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցների որակավորման ստուգման անցկացմանը եւ անհրաժեշտության դեպքում նախաձեռնում նման որակավորման ստուգման անցկացումը,

● համաձայնեցնում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների նշանակման եւ ազատման հետ կապված որոշումները:

ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման նկատմամբ միասնական մեթոդաբանական եւ գործառնության մոտեցումը ենթադրում է, որ՝

● Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը ռիսկերի կառավարման առաջավոր փորձի, ինչպես նաեւ կիրառվող տրամադրված փաստաթղթերի եւ ճյուղային չափորոշիչների մշտական վերլուծություն է իրա-

կանացնում ռիսկերի կառավարման որակի անընդհատ բարձրացումն ապահովելու նպատակով:

● Բանկային խմբի ռիսկերի կառավարման համակարգի որակի վերահսկման, ինչպես նաեւ վերլուծության հիման վրա համակարգող ստորաբաժանումը պարբերաբար պետք է վերանայի մեթոդաբանությունը եւ մյուս ներքին տրամադրված փաստաթղթերը, որոնք կարգավորում են ռիսկերի կառավարումն ամբողջ խմբում:

● ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումներն ապահովում են մեծ ռիսկերի կառավարումը կարգավորող ներքին տրամադրված փաստաթղթերի հարմարեցումը ԽՖԿ-ներում՝ հաշվի առնելով կոնկրետ դրանց գործունեության առանձնահատկությունները:

● ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումները համակարգում են բանկային խմբի ռիսկերի կառավարումը կարգավորող հարմարեցված ներքին տրամադրված փաստաթղթերի ներդրումը ԽՖԿ-ներում եւ ներդրման ընթացքի մասին հաշվետվություններ ներկայացնում բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումները:

Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը վերահսկում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների կողմից ռիսկերի կառավարման ներքին տրամադրված փաստաթղթերի պահանջների կատարումը՝ հիմնվելով այդ ԽՖԿ-ների ներքին վերահսկողության/աուդիտի մարմինների հաշվետվությունների, ԽՖԿ-ների ռիսկ-հաշվետվության քննարկման վրա, ինչպես նաեւ ընդունվող ռիսկերի մակարդակի գնահատման ու մոնիթորինգի գործընթացներում ԽՖԿ-ներում օգտագործվող գործիքների (մաթեմատիկական մոդելների) որակի վերահսկում իրականացնում: Վերահսկման իրականացման արդյունքների հիման վրա ԽՖԿ-ների ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը իրավասու է առաջադրել ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների նկատմամբ համակարգային միջոցներ, ինչպես նաեւ այդ ստորաբաժանումների աշխատակիցների նկատմամբ կարգապահական միջոցներ ձեռնարկելու հարցը այն կարգով, որը նախատեսված է ԽՖԿ-ների ներքին տրամադրված փաստաթղթերով, եւ/կամ բանկային խմբի համապատասխան կազմակերպությունների կազմի մեջ մտնող երկրների աշխատանքային օրենսդրության դրույթներին համապատասխան:

Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը հանդես է գալիս ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների գործունեության համակարգողի դերում, այդ թվում՝ ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական պարամետրերի մեծությունները սահմանելու, բանկային խմբի կազմակերպությունների կողմից ընդունվող ռիսկերի մակարդակի վրա սահմանափակումներ հաստատելու, ռիսկի ցուցանիշների կրիտիկական մեծություններին արձագանքելու գործընթացում: Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը իրավասու է նախաձեռնելու այդ ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման համակարգի ծրագրային-տեխնոլոգիական ապահովման համար միասնական չափորոշիչների մշակումը: Ռիսկերի կառավարման նկատմամբ միատեսակ մոտեցում ապահովելու համար բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը նաեւ ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումներին օժանդակություն է ցույց տալիս ռիսկի մակարդակի գնահատման ու մոնիթորինգի համար ծրագրային միջոցներ ընտրելիս, ձեռք բերելիս եւ օգտագործելիս: ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման բարձր որակ ապահովելու համար բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը մշակում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցներին ներկայացվող միասնական մասնագիտական պահանջներ: ԽՖԿ-ների այն պրոֆիլային ստորաբաժանումները, որոնք լիազորված են որակավորման ստուգման անցկացնելու ներքին տրամադրված փաստաթղթերին համապատասխան, անհրաժեշտության դեպքում դրանց ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցների որակավորման ստուգումն է նրանց մասնագիտական գիտակության մակարդակի գնահատումն են անցկացնում ԽՖԿ-ների ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանման մշակված որակավորման ստուգման ծրագրերի հիման վրա եւ այդ ստորաբաժանման մասնակցությամբ: Տվյալ ստորաբաժանումն

անհրաժեշտության դեպքում կարող է նաև նախաձեռնել ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների աշխատակիցների որակավորման ստուգման անցկացում: Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը անհրաժեշտության դեպքում է ԽՖԿ-ների համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումների հետ համաձայնեցնելով կարող է ԽՖԿ-ներում ռիսկերի կառավարման անջնջությամբ պարտադիր միջոցառումներ ձեռնարկելու համար անցկացնել անհրաժեշտ մարդկային և տեխնիկական ռեսուրսների պահանջմունքի գնահատում: Ինչ վերաբերում է ԽՖԿ-ների ռիսկերի կառավարման ստորաբաժանումների դեկավարների պաշտոնում նշանակելուն կամ ազատելուն, ապա նման որոշումները նախաձեռնվում են ընդունվում են ԽՖԿ-ներում գործող կարգին համապատասխան, սակայն այդ որոշումները չեն կարող հաստատվել, մինչև որ չստացվի բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումն համաձայնությունը:

Պետք է նշել, որ ֆինանսական շուկայի ճգնաժամային իրավիճակների նույնականացումը, ինչպես նաև դրանց արձագանքելու միջոցառումների ձեռնարկումը իրականացվում են ռիսկերի կառավարման հիմնական գործընթացների շրջանակներում: Մեթոդաբանության համատեքստում ֆինանսական շուկայի ճգնաժամային իրավիճակի տակ հասկացվում է ամբողջությամբ վերցված տնտեսության կամ առանձին շուկաների այն վիճակը, որը չի համապատասխանում բանկային խմբի ռազմավարությունը, բյուջեն մշակելիս արված հիմնական թույլտվություններին: Առանձնացվում է շուկայական ճգնաժամային իրավիճակների երկու հիմնական տեսակ՝ չկանխատեսված անկում և արագացած աճ: Չկանխատեսված անկումը ենթադրում է տնտեսության աճի տեմպերի դանդաղում, գործարար ակտիվության նվազում, շուկաների ծավալների կրճատում, շուկայական ինդեքսների անկում: Արագացած աճը ենթադրում է տնտեսության բուռն աճ, նոր շուկաների, արտադրանքների և գործիքների ի հայտ գալ, գործարար ակտիվության մեծացում, ինչպես նաև շուկայական ինդեքսների աճ:

Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը վերլուծում է Խմբի ռիսկերի ցուցանիշների փաստացի մեծությունները: Ռազմավարական ռիսկի որոշակի ցուցանիշների կամ ռիսկերի այլ տեսակների միաժամանակ մի քանի ցուցանիշների կողմից սահմանված թույլտվությունների կառավարումը համակարգող ստորաբաժանումը ենթադրություն է անում շուկայի ճգնաժամային հնարավոր իրավիճակի մասին: Ենթադրվող ճգնաժամային իրավիճակի տեսակը (չկանխատեսված անկում կամ արագացած աճ) որոշվում է նպատակային մեծություններից ցուցանիշների շեղման ուղղության համեմատ: Շուկայի ճգնաժամային իրավիճակի իրացման վերաբերյալ ենթադրության առաջընթացում դեպքում Խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը հաշվետվություն է կազմում ռիսկի մակարդակի սահմանափակումների խախտման մասին, որն այդ թվում ներառում է բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումն փորձագիտական եզրակացությունը ենթադրվող շուկայական ճգնաժամային իրավիճակի բնույթի ու տեսակի մասին, ինչպես նաև շուկայական ճգնաժամային իրավիճակի արձագանքելու հնարավոր միջոցառումների մասին: Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը հաշվետվությունը ներկայացնում է բանկում գործող համապատասխան պրոֆիլային կոմիտեի քննարկմանը, նրա ներկայացմամբ էլ՝ բանկի վարչության քննարկմանը:

Բանկի պրոֆիլային կոմիտեն կամ վարչությունը բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանման հաշվետվության հիման վրա որոշում է ընդունում հնարավոր մեծությունների խախտման իրավիճակի արձագանքելու անհրաժեշտ միջոցառումների մասին: Մասնավորապես՝ կարող են քննության ենթարկվել հետևյալ միջոցառումները. ա) ընդունվող ռիսկերի մակարդակի սահմանված սահմանափակումների շտապ փոփոխում, որի նպատակն է կանխել այն ռիսկերի ընդունումը, որոնց ազդեցությունը շուկայի ճգնաժամային իրավիճակում կարող է թերազնահատվել. բ) բանկային

խմբի ռազմավարական զարգացման համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական պարամետրերի նպատակային մեծությունների արտապլանային վերանայում, որի նպատակն է ստուգել այդ խմբի ռազմավարության կամ բյուջեի իրացման հնարավորությունները՝ սահմանված ռիսկի պահպանմամբ՝ հաշվի առնելով փոփոխված տնտեսական պայմանները: Այն դեպքում, երբ եզրակացություն ստացվի, որ սահմանված ռազմավարական նպատակների իրականացման համար ռիսկը պետք է մեծացվի (կամ արագացած աճի իրավիճակում եզրակացություն այն մասին, որ սահմանված ռիսկի պահպանման դեպքում ռազմավարական նպատակները կարող են դրվել ավելի բարձր մակարդակի վրա), ապա վերանայվում են բանկային խմբի ռազմավարությունը կամ բյուջեն, ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական պարամետրերի մեծությունները և համապատասխանաբար՝ ռիսկի մակարդակի սահմանված սահմանափակումները:

Բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը և մեթոդաբանական աջակցության ստորաբաժանումները պետք է վերլուծեն մաթեմատիկական մոդելների գործող այն պարամետրերի և թույլտվությունների կիրառելիությունը, որոնք օգտագործվում են շուկայի ճգնաժամային իրավիճակի իրականացումը ռիսկերի մակարդակը գնահատելու համար: Անհրաժեշտության դեպքում բանկային խմբի ռիսկերի կառավարումը համակարգող ստորաբաժանումը և մեթոդաբանական աջակցության ստորաբաժանումները պետք է վերանայեն ռիսկերի մակարդակի գնահատման համար օգտագործվող մաթեմատիկական մոդելների պարամետրերն ու թույլտվությունները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆինանսական շուկայի ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու միջոցառումների կատարման արդյունքում ռիսկերի կառավարման հիմնական գործընթացները կատարվում են՝ հաշվի առնելով դրանց համահունչ ռազմավարական պարամետրերի մեծությունների և ռիսկի մակարդակի սահմանափակումների փոփոխությունները: Անհրաժեշտության դեպքում կարող է նաև ընդլայնվել ռիսկի ցուցանիշների ցանկը, որոնց հիման վրա դրա մակարդակի մոնիթորինգ է իրականացվում: Միաժամանակ՝ շուկայի ճգնաժամային իրավիճակի դեպքում ռիսկերի կառավարման գործընթացներ իրականացնելիս բանկային խմբի մակարդակով նախաձեռնվում են ռիսկերի կառավարման համապատասխան գործընթացներ տվյալ խմբի կազմակերպությունների մակարդակով:

Ներկայացվել է 12.10.2016թ.

Ընդունվել է տպագրության 31.10.2016թ.

1. ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Չայաստանի բանկերի միություն, 2012
2. Basel Committee on Banking Supervision, Enhancing corporate governance for banking organizations, September 1999, Revised in February 2006.
3. ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Չայաստանի բանկերի միություն, 2012
4. CEBS High Level Principles for Risk Management, EBA (European Banking Authority)'s Committee of European Bank Supervisors, 16 February 2010.
5. ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Չայաստանի բանկերի միություն, 2012
6. Basel Committee on Banking Supervision, Enhancing corporate governance for banking organizations, September 1999, Revised in February 2006.

## Օգտագործված գրականություն

1. ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիա, Չայաստանի բանկերի միություն, 2012
2. Basel Committee on Banking Supervision, Enhancing corporate governance for banking organizations, September 1999, Revised in February 2006.
3. CEBS High Level Principles for Risk Management, EBA (European Banking Authority)'s Committee of European Bank Supervisors, 16 February 2010.
4. Principles for enhancing corporate governance, BIS, Working Group on Corporate Governance of the Basel Committee on Banking Supervision, October 2010.